

ՎՈԼՖԳԱՆԳ ԳՈՒՍՏ. Հայերի ցեղասպանությունը. աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը. Երևան, «Հայաստան» հրատ., 2002, 294 էջ:

Հայաստանում և արտերկրում հայոց ցեղասպանության լուսաբանման աշխատանքն առաջօր որքան էլ մեծ և գնահատելի ձեռքբերումներ է արձանագրել, այնուհանդերձ ինքնին հասկանալի է, որ գրանք բավարար համարվել է են կարող, քանի գեռ այդ ոլորտում պատմագիտության առևճ ծառացած հիմնական գերինդիրը, այն է կատարված ոճրագործությունների վերաբերյալ միջազգային հանրության պատշաճ և համակողմանի իրազեկումը իրականացված չէ: Ցավոք, գեռ որոշակի կազմակերպական հիմքերի վրա չի դրվել նաև հայ և արտերկրի պատմագիտության նվաճումների փոխանակման գործը, որ կարող էր իրագործվել միմիայն համակարգված թարգմանական աշխատանքի միջոցով, և որի գեպքում գիտահետազոտական աշխատանքները կարող էին կրել փոխհամագործակցված բնույթ, իսկ գրանց արդյունավետությունն էապես կբարձրանար: Այս իրողությունները նկատի առնելիս դժվար է գերազնահատել գերմանացի հրապարակախոս Վոլֆգանգ Գուստի «Հայերի ցեղասպանությունը. աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը» աշխատության կարևորությունը, որի հայերեն թարգմանությունը (Ռուզան Յորգանյանի թարգմանությամբ) վերջերս լույս է ընծայել «Հայաստան» հրատարակչությունը: Նախ հարկ է նշել, որ նյութի մատուցման նկարագրական և գիտահանրամատչելի բնույթով հատկանշվող այդ աշխատությունը, ի տարբերություն զուտ գիտական ուսումնասիրությունների, հեշտությամբ կարող է դառնալ ոչ միայն գիտական, այլև ընթերցող լայն շրջանների սեփականությունը և թերևս առաջին հերթին նախատեսված է հենց նրանց համար, հանգամանք, որ հայոց ցեղասպանության մասին օտարալեզու հանրամատչելի գրականության ներկայիս սակավության պարագայում պետք է

համարել այդ աշխատության կարևոր արժանիքներից մեկը: Առանձնահատուկ գնահատանքի է արժանի նաև գրքի տեղեկատվական խիստ լայն ընդգրկումը, որը, բնականաբար, նույնպես պայմանավորված է վերոնշյալ հանգամանքով: Հեղինակն իր ոչ առանձնապես ստվարածավալ, 9 բաժիններից և 75 ենթաբաժիններից բաղկացած աշխատությունում կարողացել է ամբողջականորեն, տեղ-տեղ նաև խիստ մանրամասն ներկայացնել ինչպես հայ ժողովրդի բնաջնջման՝ երիտթուրքական քաղաքականությունն ու Մեծ Եղեռնի զարհուրելի իրադարձությունները, այնպես էլ դրանց նախորդող ու հաջորդող թուրքիայի կարևորագույն ներքաղաքական զարգացումների համապատկերը, ԱԻԻ դ. վերջի համիդյան կոտորածները, հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը, Հայկական հարցի ձևավորման ու զարգացման պատմությունը մեծ տերությունների ռազմաքաղաքական փոխհարաբերությունների համատեքստում, այն նախադրյալները, կապերն ու փոխառնչությունները, որոնց հենքի վրա ծրագրավորվեց, կազմակերպվեց ու իրականացվեց XX դ. առաջին ցեղասպանությունը, այդ ոճրի հանդեպ Գերմանիայի և այլ երկրների, կառավարությունների, ինչպես և առանձին քաղաքական գործիչների ու դիվանագետների կողմից ցուցաբերված դիրքորոշումը, երիտթուրքական կառավարության պարագլուխների հետպատերազմյան պործունեությունն ու վախճանը, ցեղասպանության ճանաչմանը նպատակաուղղված հայկական շրջանների նախաձեռնությունները, հայահարկչական գործողությունների պատմությունը: Մի խոսքով, այն ամենը, ինչ կարող էր գիտական բազմաթիվ մեծագույնությունների նյութ հանդիսանալ, և ինչը սակայն, Վ. Գուստի աշխատությունում լիովին բավական է հայոց ցեղասպանությունը:

յունը բովանդակող պատմական իրակա-  
նություն մասին լայն հասարակական  
չըջաններում պատշաճ իրազեկում ապահո-  
վելու համար:

Թերևս սխալված չենք լինի, եթե նշենք,  
որ հազիվ թե հնարավոր լինի մեկ այլ օտա-  
րագրի ժամանակակից հեղինակ գտնել, որն  
այդքան անթաքույց և որոշակի ներկայաց-  
րած լինի 1915-ին թուրքական իշխանութ-  
յունների կողմից Հայերի հանդեպ իրա-  
գործված զարհուրելի ոճրագործություննե-  
րը սահմակեցուցիչ մանրամասներով: Ման-  
րամասներ, որոնք գերմանացի և այլազգի  
ընթերցողին լավագույն հնարավորութ-  
յունն են ընձեռում ծանոթանալու 1915 թ.  
հայ ժողովրդին վիճակված արհավիրքնե-  
րին:

Գրքի հաջորդ և թերևս ոչ պակաս  
կարևոր արժանիքը պետք է համարել այն,  
որ հեղինակն այդ և վերոնշյալ մյուս  
խնդիրները լուսաբանելիս գերազանցապես  
օգտվել է Եվրոպայում և ԱՄՆ-ում հրատա-  
րակված այնպիսի սկզբնաղբյուրներից, ո-  
րոնցից շատերը հայ պատմագիտության  
համար նախկինում մատչելի չեն եղել: Կա-  
տարվող ոճրագործությունների վերաբեր-  
յալ տվյալ ժամանակահատվածում թուր-  
քիայում գտնվող եվրոպական և ամերիկ-  
յան բարեգործական հաստատությունների  
աշխատակիցների, քարոզիչների, ղեկման-  
գետների, զինվորականների, ճանապար-  
հորդների և այլոց կողմից կատարված բազ-  
մաթիվ վկայությունների հմուտ օգտա-  
դործմամբ, ինչպես և արդեն իսկ առկա ու-  
սումնասիրությունների արդյունքների  
մասնակի ամփոփումներով, աշխատություն-  
ը փաստագրական մեծաքանակ նյութեր է  
տրամադրում նաև Հայ պատմագիտության  
ընդ, և գրքի հայերեն հրատարակությունը  
թերևս առաջին հերթին հենց այդ առումով  
է կարևորվում: Ավելին, հիշյալ սկզբնաղբ-  
յուրները Վ. Գուստին հնարավորություն  
են ընձեռել զբաղվել նաև թեմային առնչ-  
վող հանգուցային այնպիսի խնդիրների  
պարզաբանմամբ, որոնց հայ պատմագի-  
տությունն առայսօր միայն թուղցիկ և  
մասնակիորեն է կարողացել անդրադառ-  
նալ: Մի շարք փաստաթղթերի և գրավոր  
վկայությունների համեմատական քննութ-

յամբ նա պարզել է, օրինակ, որ երիտթուր-  
քական կառավարության կողմից արևմտա-  
հայկական բնաջնջման վճիռը կայացվել էր  
գեռ Առաջին համաշխարհային պատերազ-  
մից առաջ, և որ թուրքիայի մասնակցութ-  
յունը պատերազմին նաև այդ ծրագրի իրա-  
կանացման նպատակն էր հետապնդում:

Այդ առումով ոչ պակաս հետաքրքրա-  
հարույց են նաև ցեղասպանության հրա-  
հանգավորման մեթոդաբանության շուրջ  
հեղինակի կատարած դիտարկումները,  
մասնավորապես ոճրագործություններին  
արտաքուստ տարերային բնույթ հաղորդե-  
լու և դրանց հանդեպ պատասխանատվութ-  
յունից զերծ մնալու նպատակով երիտթուր-  
քերի կողմից իրագործված՝ «հրամանների և  
հակահրամանների» քաղաքականության  
պարզաբանումը: Հանգամանալից քննութ-  
յան է ենթարկվել նաև երիտթուրքական  
կառավարության կողմից ձևավորված՝  
արևմտահայկական բնաջնջման գործը հա-  
մակարգող և ղեկավարող հատուկ կազմա-  
կերպության տիրահաշակ գործունեություն-  
ը: Ուշագրավ է նաև հեղինակի այն տեսա-  
կետը, որ ցեղասպանության հիմնական  
դրդապատճառներից մեկը հանդիսանում էր  
երկրի Հայ ազգաբնակչության ունեցվածքի  
կողոպտման երիտթուրքական կառավարող  
չըջանների նկրտումը. ուշագրավ առաջին  
հերթին գրքում ներկայացված հիմնավո-  
րումներով:

Իրողությունների և փաստերի հմուտ  
քննությունամբ Վ. Գուստը կարողացել է նաև  
համոզիչ ու անառարկելի կերպով ապացու-  
ցել, որ հետպատերազմյան շրջանում թուր-  
քիայի նոր կառավարության կողմից հայ  
ժողովրդի հանդեպ իրագործված ոճրագոր-  
ծությունների հրապարակային դատապար-  
տումը և դրանց առանձին պատասխանա-  
տուների հանդեպ կիրառված դատապար-  
տությունները թելադրված էին ոչ թե մեղքի  
անկեղծ գիտակցման և պատժի անհրաժեշ-  
տություն, այլ համապատասխան պատ-  
րանքների ստեղծման դրդումներով, և որ  
Մուստաֆա Քեմալն ու իր գործընկերներն  
իրականում շարունակում էին սերտ համա-  
գործակցության մեջ մնալ թալեբաթի և  
պաշտոնապես «հետապնդվող» մյուս վտա-  
րանդի երիտթուրքերի հետ, իսկ նրանց, ով-

քեր զերծ էին մնացել դատական պատասխանատվության ենթարկվելուց, ակտիվորեն ընդգրկում էին նոր կառավարությունում. մի կառավարություն, որի ծրագիրն, ինչպես իրավամբ նշում է Հեղինակը, երիտթուրքականի շարունակումն էր: «Յեղասպանության մեծ և փոքր պատասխանատուները դարձել են քեմալական վարչակազմի կարևորագույն հենարանը», – ընդգծում է նա՝ այդ կերպ միանշանակորեն Հերքելով թուրք պատմաբանների և նրանց Համակիրների կողմից երիտթուրքական կառավարության ժառանգորդների և Հետնորդների «անմեղաունակություն» վերաբերյալ բազմիցս ի Հայտ եկած պնդումները:

Աշխատության կարևորագույն արժանիքներից մեկը նաև այն է, որ Հեղինակը ձգտել է առանձնակի բնութագրել լուսարանելի Հատկապես այն իրողությունները, որոնք թուրքական պատմագիտության կողմից պարբերաբար դարձել են շահարկումների առարկա, և որոնց օբյեկտիվ լուսաբանումն րոտ այդպիսի միայն գիտական, այլև պատմաքաղաքական կարևոր նշանակություն ունի: Հատկանշական է, օրինակ, որ նկատի առնելով Ուուհայի, Վանի ու Շապին Գարահիսարի հայկական ինքնապաշտպանական դիմադրության հարցերի շուրջ պարբերաբար կատարվող շահարկումներն ու նենգափոխումները՝ Վ. Գուստրը հարկ է համարել դրանց անդրադառնալ Հնարավորինս մանրամասնորեն, և թերևս սխալված չենք լինի, եթե ասենք, որ նրա աշխատությունում ամփոփված է Վանի իրադարձությունների առայսօր կատարված ամենահանգամանալից և արժեքավոր նկարագրություններից մեկը: Միևնույն նպատակադրումն ունի նաև Հայոց ցեղասպանության Հանդեպ կայսերական Գերմանիայի կառավարող շրջանների, ինչպես և պատերազմի տարիներին Թուրքիայում տեղակայված առավել ազդեցիկ գերմանացի սպաների ու դիվանագետների ցուցաբերած դիրքորոշման անաչառ, ըստ Հնարավորին մանրագնին լուսաբանումը, որի ընթացքում, չբացառելով ցեղասպանության հրահանգավորման և իրականացման հարցում երիտթուրքերի Հետ գերմանացի առանձին

դիվանագետների կամ զինվորականների ուղղակի համագործակցության հնարավորությունը. Հեղինակը սուր քննադատության է ենթարկում արևմտահայության բնաջնջման երիտթուրքական քաղաքականության Հանդեպ գերմանական կառավարության որդեգրած ընդհանուր առմամբ խիստ Հանդուրժողական կեցվածքը: Իրավամբ կարելի է ասել, որ ոճագործությունների ականատես, լրագրող և մեծ հումանիստ Հայրիխ Ֆիրբյուխերից Հետո Վուլֆգանգ Գուստրը թերևս երկրորդ գերմանացի Հեղինակն է, որը Հայոց ցեղասպանության Հանդեպ գերմանական կառավարության և Թուրքիայում տեղաբաշխված գերմանական սպայակուլտի Հանդուրժողական քաղաքականությունը այդօրինակ մանրագնին, անխնա և անաչառ քննադատության է ենթարկել: Նա, իհարկե, չէր կարող չանդրադառնալ նաև ժամանակի ընթացքում Հայ և Հրեա ժողովուրդների ողբերգական ճակատագրերի միջև անցկացված զուգահեռներին, ինչպես նաև Հիտլերի Հայտնի ելույթի չուրջ ի Հայտ եկած մեկնաբանություններին: Եվ չնայած դեռ չի Հաղորվել լիարժեք կերպով փաստել այդ ելույթում Հայոց ցեղասպանության վկայակոչման ստուգաթուղթը, քանի որ ելույթի վերաբերյալ կատարված 5 գրառումներից միայն մեկում է այն առկա եղել, այնուհանդերձ Հեղինակն իրավացիորեն Հանգում է այն միանգամայն իրատեսական եզրակացությունը, որ երկու ոճագործությունների միջև կասկած խիստ Հավանական է, և որ Հայոց ցեղասպանության անպատիժ մնալը կարող էր միայն «սաստկացնել դերմանական ցեղասպանների բնաջնջման մոլուցքը» (էջ 277):

Վ. Գուստրի աշխատության Հետ մանրագնին ծանոթությունը, այնուամենայնիվ, թույլ է տալիս չհամաձայնել դրախառնույթում արտահայտված որոշ տեսակետների Հետ: Անդրադառնալով Գուստրի կատարած բացահայտումներին առաջաբանի Հեղինակ Ա. Զարյանը նշում է, որ «Թուրքիայի բոլոր քաղաքներում գտնվող գերմանական Հյուպատոսները խրախուսում, իսկ գերմանացի սպաներն անձամբ մասնակցում էին երիտթուրքերի վարչազուրկություններին» (էջ 4): Այդ նկատա-

ուումը, սակայն, պետք է համարել թյուրըմբռնման արդյունք, քանի որ այն ոչ միայն պատմական իրականությունն է հակասում, այլև աշխատության համար ևս բնութագրական է: Հավատարիմ մնալով պատմական իրականությունը՝ Վ. Գուստն իր գրքում հստակ կերպով լուսաբանել է, որ մի շարք հյուսիսատոններ, ինչպես օրինակ, Վալտեր Ռիոսերը, Մաքս Էրվին Փոն Շյոբներ-Ռիխտերը, Օլգեն Բյուգեն, Վալտեր Հոլշտայնը, Բերգֆելդը և այլք, նաև դեռևս Վոլֆ-Մետեռնիխը շարունակաբար հանդես են եկել հայ ժողովրդի բնաջնջման երիտթուրքական միջոցառումների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվությամբ, որտեղ հաճախ ընդգծվել է նաև ոճրագործությունների կանխման նպատակով ակտիվ միջամտության անհրաժեշտությունը (էջ 31, 241–246 և այլն): Իսկ ինչ վերաբերում է երիտթուրքական վայրագություններին գերմանացի սպաների մասնակցությունը, ապա առայժմ հայտնի է միայն մեկ աղբյուրի անձնավորություն՝ մայոր կոմս Վոլֆսկիլը, որը մասնակցել է Ուռհայի և Մուսա լեռան՝ ինքնապաշտպանության դիմած հայերի դեմ թուրքական ռազմական ուժերի դիմված գործողություններին (էջ 176–177, 180), և Վ. Գուստի աշխատությունում ևս նրանից դատ այլ զինվորականների մասնակցություն մասին փաստացի վկայություններ չկան:

Չի կարելի թերևս համաձայնել նաև առաջաբանի հեղինակի այն մտքի հետ, որ «1915–18 թվականների երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանության մասին գերմաններն լույս տեսած աշխատություններ, չնչին բացառությամբ, հեղինակել են հայ, ավստրիացի կամ շվեյցարացի պատմաբանները»: Ինչպես հայտնի է, համեմատաբար վաղ շրջանում, այսինքն մինչև երկրորդ աշխարհամարտի սկիզբը գերմանացի հեղինակներն, ինչպես օրինակ, գր. Յոհանես Լեփսիուսը, Արմին Տ. Վեգները, Հայնրիխ Ֆիրբյուրխերը, Բրունո Հեբարտը, Մարտին Նիպագեն և այլք մեծազույն ներդրում են ունեցել հայոց ցեղասպանության հրապարակային լուսաբանման հարցում: Իսկ եթե այդ տեսակետն այնուամենայնիվ վերաբերում է նոր շրջանին, ա-

պա կարող էր թերևս իրատեսական լինել երկրորդ աշխարհամարտից հետո մինչև 1990-ական թվականների սկիզբն ընկած ժամանակահատվածի համար, քանի որ ներկայիս կտրվածքով այն անտեսում է վերջին տասնամյակի ընթացքում գերմանացի մի շարք երախտավոր գիտնականների, զորքերինակ, Ուվե Ֆայդելի, Մարտին Թամկի, Հերման Գոլթցի, Թեսսա Հոֆմանի և այլոց հեղինակած արժեքավոր ուսումնասիրությունները, որոնք արդեն իսկ իրենց պատվավոր տեղն են զբաղեցրել հայոց ցեղասպանության ուսումնասիրմանն ու լուսաբանմանը նվիրված աշխատանքների շարքում:

Ողջունելով Վոլֆգանգ Գուստի աշխատության հայերեն հրատարակությունը՝ ավելորդ չենք համարում միաժամանակ նշել, որ այն ցանկալի էր տեսնել օգտագործված տեղանունների, անձնանունների և բովանդակության ցանկերի հետ միասին, որոնք, ցավոք, բացակայում են, և որոնց առկայությունը դեպքում ընթերցողի կամ թեմային առնչվող առանձին խնդիրներով զբաղվող հետազոտողի համար զգալիորեն կդյուրացվեր բազմաթիվ մեծ և փոքր վերնագրերով և անձնանունների ու տեղանունների մեծ առատությամբ հատկանշվող գրքի յուրացումը: Ինչ վերաբերում է աշխատության ընդհանուր բովանդակությանը, ապա այնտեղ նույնպես առկա են որոշ թերություններ: Ուռհայի ողբերգական իրադարձություններին անդրադառնալիս, օրինակ, հեղինակը նշում է, որ Ֆրանց Հեբարտն այնտեղ կառուցել էր մի գորգագործական ֆաբրիկա, որպեսզի աշխատանքով ապահովեր 1895–1896 թթ. ջարդերի հետևանքով այրիացած կանանց, և որ գերմանացիների կողմից այնտեղ հիմնված որբանոցը ղեկավարել է նրա եղբայր Բրունո Հեբարտը (էջ 171–172): Իրականում, սակայն, թե՛ հիշյալ ֆաբրիկան և թե՛ որբանոցը հիմնել է դր. Յոհանես Լեփսիուսը, իսկ տեղում դրանց ղեկավարումն իրականացնում էր ոչ թե Բրունո Հեբարտը, այլ Ֆրանց Հեբարտը: Մի այլ առիթով Վ. Գուստը ներկայացնում է Տերտերյան ազգանունով մի հայորդու հետ կատարված իրադարձությունները (էջ 177–178), որոնք, սակայն, ի-

րականում վերաբերում են Ուսանողի քառանգ Գարեգին Ոսկերչյանին կամ ինչպես այնտեղ շատերը նրան կոչում էին՝ Տեր-Գարեգինին: Մեկ այլ դեպքում նկարագրելով իր տանը Հայ տղամարդկանց թաքցնելու գանձուհի օրինորդ Կարեն Յեպիհի Հանդուգն նախաձեռնությունը, Հեղինակը նշում է, որ նրանք Յեպիհի օգնությամբ թաքնված են մնացել մինչև 1916-ի ամռան վերջը (էջ 178), մինչդեռ իրականում թվով մոտ մեկ տասնյակ մարդիկ իրենց թաքստոցից դուրս են եկել ոչ թե 1916-ին, այլ 1917-ի աշնանը: Այս և մի շարք այլ նման անճշտությունները, սակայն, ինքնին Հասկանալի է, որ գրքի Հիմնական արժանիքներն ամենևին չեն կարող նսեմացնել: Ուստի մնում է պարզապես արձանագրել, որ Վոլֆգանգ Գուստի «Հայերի ցեղասպա-

նությունը. աշխարհի Հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը» աշխատությանը Հայոց ցեղասպանության վերաբերյալ առայսօր կատարված չրապարակումների ընտրանին ձեռք է բերել մի արժեքավոր Համայնում, որը կարող է դիմանալ ժամանակների քննությանը: Ուրախալի է, որ Հայերեն թարգմանության շնորհիվ գիրքը վերջապես դարձել է նաև Հայ ընթերցողի սեփականությունը, և մնում է միայն հուսալ, որ ոչ Հեռու ապագայում ի Հայտկան նաև այլ լեզուներով թարգմանություններ՝ մարդկության պատմության մեջ աննախադեպ ոճրագործության այգ նոր գիտահանրամատչելի տարեգրությունը մյուս ժողովուրդներին նույնպես մատչելի դարձնելու Համար:

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ